Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

50/4146/ 20 մարտի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224
12038

Ա

## Ուժային՝ լայն իմաստով

Վերջին օրերին սկսեցին հրատարակվել խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ դաշինքների ցուցակները: Չկա բնության մեջ այնպիսի ցուցակ, որից գոհ լինեն տվյալ քաղաքական ուժի բոլոր համակիրները: Անպայման կգտնվի մեկը կամ մի քանիսը, որոնք տվյալ ընտրազանգվածի այս կամ այն հատվածի համար անընդունելի կլինեն: Ավելին՝ չկա աշխարհում որեւէ նման ցուցակ, որի դասավորությունից գոհ լինեն այդ ցուցակում ընդգրկվածները: Մանավանդ՝ հայերի պարագայում, որտեղ անհատները, մանավանդ նրանք, ովքեր առնչվում են «բարձր քաղաքականությանը», չափազանցված պատկերացում ունեն իրենց արժանիքների եւ ծառայությունների մասին: Այս դեպքերում պարտադիր կլինեն «աբիժնիկներ», որոնք, իհարկե, չեն ասի, թե նեղացել են ցուցակում «իրենց հարիր» տեղը չզբաղեցնելու համար, այլ կհայտարարեն, որ խորը գաղափարական տարաձայնություններ ունեն առաջին 3-5 տեղերը զբաղեցնողների հետ:

Որպես քաղաքացի եւ ընտրող՝ ես դժգոհ եմ առայսօր հրապարակված բոլոր ցուցակներից: Իհարկե, իդեալական մարդիկ չկան, եւ եթե նույնիսկ կան, նրանք չեն ուզում դառնալ ՀՀ ԱԺ պատգամավոր: Բայց խոսքը անձնական հատկանիշների մասին չէ: Գեներալ Մանվելը (ՀՀԿ) եւ Գագիկ Ջհանգիրյանը (ՀԱԿ) տարբեր անհատներ են եւ ունեն նաեւ դրական դրսեւորումներ՝ մեկը պատերազմի հերոս է, մյուսը՝ բարձրակարգ իրավաբան: Նրանց եւ բազմաթիվ այլ «ցուցակային մարդկանց» միավորում է հետեւյալը. նրանք քաղաքական եւ հասարակական խնդիրները ուժային մեթոդներով լուծելու կողմնակիցներ են (ինչը, բնականաբար, հրապարակավ չեն խոստովանում): Նրանք 90-ականների կեսերից ակտիվորեն մասնակցել են այն համակարգի կերտմանը, որի ժամանակ տնտեսական եւ քաղաքական «վերելակները» ծառայում են ոչ թե առավել խելացի եւ արժանի մարդկանց, այլ տգետներին ու զոռբաներին, եւ ամենացավալին այն է, որ այդ «խաղի կանոններն» ընդունում է հասարակության մեծ մասը, նաեւ՝ երիտասարդները:

Իսկ եթե «ուժային մեթոդները» հասկանանք ավելի լայն՝ ոչ միայն որպես բռնություններ եւ բիրտ ֆիզիկական ուժի կիրառում, ապա պետք է արձանագրել, որ ցուցակներում կան բազմաթիվ մարդիկ, որոնք ցանկանում են իրենց ուզածին հասնել բարոյական պրեսինգի, շանտաժի միջոցով: Օրինակ՝ իբր ուզում են ժողովրդավարություն հաստատել, բայց անում են դա հակաժողովրդավարական մեթոդներով: Կամ՝ իբր պաշտպանում են քրիստոնեական արժեքները, բայց՝ առանց քրիստոնեական հեզության ու պարկեշտության: Այդպիսիները կարծում են, թե ժողովրդավարության եւ քրիստոնեության մենաշնորհ ունեն, եւ իրենք են դրանց միակ քուրմերը: Սա էլ «ուժային մեթոդի» մասնավոր դրսեւորումն է, ավելին՝ բռնությունների հոգեբանական եւ գաղափարախոսության հիմքը:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Փնտրվում է նախընտրական հանգուցյալ

«Առավոտը» տեղեկացել է, որ Արմավիրի մարզի թիվ 19 ընտրատարածքում պայքարելու են ՀՀԿ անդամ Հակոբ Հակոբյանը եւ ոչ ՀՀԿ-ական Սեյրան Սարոյանը (լուսանկարում), ում էլ սատարում է իշխող կուսակցությունը: Այս ընտրատարածքում ոչ պաշտոնապես մեկնարկած ընտրապայքարը հետաքրքիր փուլ է մտնում եւ արտառոց դրսեւորումներ ունենում: Սեյրան Սարոյանի ներթակաները շտաբում եղած մի խոսակցության ժամանակ շեֆին տեղեկացրել են, որ տեղացի ընտրողները դեռ հիշում են եւ տպավորված են Հակոբ Հակոբյանի՝ ժամանակին բաժանած օգնություններով, որոնցից մեկն էլ հանգուցյալների ընտանիքներին տրամադրված ֆինանսական աջակցությունն էր: Ասում են՝ պաշտոնաթող գեներալը երկար մտածելուց հետո իր ներթականերին պատվիրել է. «Այ տղա, գնացեք մի մեռել գտեք, մենք էլ փող-մող տանք: Թե չէ՝ զահլես տարաք»:



## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Գուրգեն Եղիազարյանը կառաջադրվի մեծամասնականով

ՍԴՀԿ անդամ Գուրգեն Եղիազարյանը մեծամասնական կարգով առաջադրվելու է թիվ 27 ընտրատարածքում, որն ընդգրկում է Արզնի քաղաքը եւ հարակից գյուղերը: Նրան առաջադրելու է ՀԱԿ անդամ «Ազատություն» կուսակցությունը, քանի որ ինչակյանների վեճը դեռեւս իր տրամաբանական ավարտին չի հասել, եւ ՍԴՀԿ-ով առաջադրվելը կարող է խնդիրներ առաջացնել նաեւ ՀԱԿ համամասնական ցուցակի համար: Հիշեցնենք, որ այդ ընտրատարածքում ՀՀԿ-ն առաջադրել է մասնագիտությամբ սրտաբան Համլետ Հայրապետյանին:

Կարդացեք էջ 2:

### Թիվ 4-ում առաջադրվելու է նաեւ Զարուհի Փոստանջյանը

Թիվ 4 ընտրատարածքում, որտեղ խոսք է գնում Զարուհի Փոստանջյանի առաջադրման մասին, իր թեկնածությունն առաջադրելու մասին հայտարարել է նաեւ մեր գործընկեր լրագրող, «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանը, ով կարծիք է հայտնել, որ «Ազատ դեմոկրատներն» իրեն կաջակցի: Մեր հարցին՝ կա՞ արդյոք համաձայնություն, թե «Ժառանգությունն» ու «Ազատ դեմոկրատներն» այս երկու թեկնածուներից ո՞ւմ են սատարելու թիվ 4-ում, «Ժառանգության» ներկայացուցիչ Ստեփան Սաֆարյանն ասաց. «Ես կարծում եմ, երբ մենք մեր համամասնական ցուցակը համաձայնեցնում էինք, «Ազատ դեմոկրատների» մեր գործընկերները տեղյակ էին նաեւ մեր մեծամասնական առաջադրումների մասին: Վստահ եմ, որ բանակցությունների ընթացքում դրա մասին խոսվել է եւ, անշուշտ, տեղյակ պահվել է, որ «Ժառանգությունն» իր կողմից մեծամասնական ընտրակարգով առաջադրելու է իր այս անդամներին: Բայց եթե հարկ լինի եւս մեկ անգամ քննարկել, իհարկե, դա չեմ բացառում»:

Կարդացեք էջ 3:

### Հակառակորդի կրակոցից սպանվել է ՀՀ ԶՈւ զինծառայող

Երեկ ՀՀ Տավուշի մարզի սահմանային դիրքերում արձանագրվել է հակառակորդի կողմից հրադադարի խախտման հերթական դեպքը, որի հետեւանքով սպանվել է ՀՀ ԶՈՒ զինծառայող: Ըստ ՀՀ ՊՆ մամուլի հաղորդագրության, ժամը 14.20-ի սահմաններում N զորամասի մարտական հենակետում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Արտակ Մնացականի Շահբազյանը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11-ին, «Հենարան» մամուլի ակումբի հյուրն է ՀՀԿ փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբյանը:

### Եղանակ

Երեւան - 4 + 8, Շիրակ - 13 + 4, Կոտայք - 13 + 4, Գեղարքունիք - 13 + 4, Լոռի - 9 + 8, Տավուշ - 4 + 12, Արագածոտն լեռներ - 13 + 4, Արագածոտն նախալեռն. - 6 + 8, Արարատ - 4 + 9, Արմավիր - 4 + 9, Վայոց Ձոր լեռներ - 13 + 4, Վայոց Ձոր նախալեռն. - 4 + 9, Սյունիքի հովիտներ - 2 + 14, Սյունիքի նախալեռներ - 6 + 7

Առավոտ aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 20.03.2012



## ԲՀԿ առաջնորդին մրցակից է հայտնվել

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է մեծամասնական ընտրակարգով երեկ առաջադրված թեկնածուների տվյալները:

Թիվ 17 ընտրատարածքում նախօրեին առաջադրված Տիգրան Կարապետյանին նոր մրցակից է հայտնվել՝ Արտաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն, ՀՀԿ-ական Կարինե Պողոսյանը: Թիվ 23 ընտրատարածքում էլ ինքնաառաջադրվել է անկուսակցական 2 թեկնածու՝ «Գրանդո-շին» ընկերության տնօրեն Տիգրան Պետրոսյանն ու անհատ ձեռնարկատեր Սմբատ Սիմոնյանը, թիվ 26-ում գյուղատնտեսության նախարարի տեղակալ, ՕԵԿ-ական Տիգրան Ղալեչյանն է, թիվ 12-ում ինքնաառաջադրվել է անկուսակցական Տիգրան Տեր-Պետրոսյանը, իսկ 22-ում՝ ՀՀԿ-ական, «Նաիրիտ» գործարանի գլխավոր տնօրենի խորհրդականը՝ Վահագն Հակոբյանը: Թիվ 25-ում ինքնաառաջադրվել է անկուսակցական Սասուն Միքայելյանը, իսկ թիվ 28-ում ԲՀԿ-ական Գագիկ Ծառուկյանի մրցակիցը «Երեւան ջուր» ընկերության թիվ 10 տեղամասի պետ, անկուսակցական Արմեն Ավդալյանն է:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

## Հաստատվել են որպես ՕԵԿ փոխնախագահներ

«Օրինաց երկիր» կուսակցությունը մարտի 18-ին հրավիրել էր քաղաքական խորհրդի նիստ, որի ընթացքում Հեղինե Բիշարյանին, Միեր Շահգելդյանին, Արմեն Երիցյանին եւ Հովհաննես Մարգարյանին քաղխորհուրդը հաստատել է որպես ՕԵԿ փոխնախագահներ: Կուսակցության քաղաքական խորհուրդը քննարկել է նաեւ մեծամասնական եւ համամասնական ընտրակարգով թեկնածուների առաջադրման խնդիրը, որի վերաբերյալ վերջնական որոշումը կկայացվի մարտի 21-ի ընդլայնված նիստում: Ըստ ՕԵԿ մամուլի ծառայության՝ քաղխորհուրդը քննարկել է նաեւ մարտի 20-ին Մարզահամերգային համալիրում տեղի ունեցող «Օրինաց երկիր» կուսակցության 15-ամյակին նվիրված միջոցառման կազմակերպման հարցը, որին կմասնակցեն շուրջ 15 հազար օեկա-

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

Սա քաղաքականության վերաբերյալ հանրային քննարկումների շարքից առաջինն է, որ ընտրազանգվածն ուզում է լսել ընտրարշավի ընթացքում: Մասնակցեք քննարկմանը եւ բարձրացրեք ձեզ հուզող հարցերը գիտնականի, բժշկի եւ հրապարակագրի հետ միասին:

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է

«Ընտրարշավի օրակարգը» թեմայով քննարկման:

Բանախոսներն են՝

Արմակադի հիմնադիր Խաչիկ Գեւորգյանը

հրապարակագիր Սամվել Մարտիրոսյանը

բժիշկ Կարեն Քոլոյանը

Քննարկումը կվարի «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն Սալբի Ղազարյանը

Քննարկումը տեղի կունենա մարտի 21-ին, ժամը 16:00-ին «Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119: Տեղերը սահմանափակ են:

# «Ի սկզբանե ոչ թե բանն էր, այլ ՀՀԿ-ն»

### ՀԱԿ անդամ Գուրգեն Եղիազարյանը ողջունում է Օսկանյանի եւ Ծառուկյանի քննադատությունը



- Արդեն մի քանի օր է՝ հրապարակված է ՀՀԿ մեծամասնական պաշտոնական ցուցակը: Իսկ ՀՀԿ համամասնական ցուցակի դեռեւս առաջին 20 անդամներն են պաշտոնապես հայտնի: Ի՞նչ տպավորություն եք ստանում՝ վերլուծելով այդ ցուցակները:

- Ի՞նչ տպավորություն պետք է ստանամ, եթե ՀՀԿ-ն եղել է մեր հեթանոսական աստվածներից, ապա Աստծո որդուց շատ ավելի առաջ: Փաստորեն, ոչ թե ի սկզբանե բանն է եղել, այլ ՀՀԿ-ն:

- Ինչո՞ւ, ինչպե՞ս:

- 2008 թվականի իր նախընտրական ծրագրում ՀՀԿ-ն հանրության դատին էր հանձնել մտքերի մի բազմազանություն, որը մեկ բառով ես կկոչեմ սոփեստություն: Այդ «հորդացող», սոփեստական մտքերից մեջբերեմ՝ կիասկանաք: «Աստծո կամոք մենք արարվել ենք որպես հայեր: Հետեւապես, մեր եւ Աստծո միջեւ հարատեւ կապն ապահովում է հայ տեսակը հավիտենականացնելու ճանապարհով: Այս ելակետն ունենալով՝ ՀՀԿ-ն մեր պատմության հեթանոսական եւ քրիստոնեական ժամանակահատվածները արժեւորում է ազգայինի առաջնության սկզբունքով». եթե ՀՀԿ-ն արժեւորում է այդ ժամանակահատվածները, ուրեմն ինքն արդեն գոյություն է ունեցել, իսկ եթե արժեւորում է ու բանաձեւում, ուրեմն ՀՀԿ-ի տեսքով է գոյություն ունեցել: Ուրեմն, թույլ տվեք ասել, որ ՀՀԿ-ն աստվածներից եւ Աստծո որդուց առաջ է եղել:

- Գալով մեր օրերին՝ ՀՀԿ մեծամասնական ցուցակում նախապատվությունը, կարծես, տրված է օլիգարխներին եւ «հեղինակություններին», իսկ համամասնական ցուցակում հանրությանը հայտնի եւ հետաքրքիր դեմքեր կան՝ Արտաշես Գեղամյան, Խոսրով Հարությունյան, գեներալ Մանվել Գրիգորյան եւ այլն: Այդ ամենը տպավորություն չի՞ գործում:

- Գիտեք, ոչ մի կերպ չեմ նայում այդ ամենին, որովհետեւ սա նման է մի լաբորատոր փորձի: Առնետների վրա անընդհատ փորձեր են դնում, նոր դեղորայքներ են անընդհատ մշակում քաղաքական դաշտում անընդհատ օգտագործելու համար, ինչն անհամեստ ճանապարհ եմ համարում, քանզի իր իշխանության տարիներին ՀՀԿ-ն ամեն ինչ արեց, որպեսզի մեր երկիրը կործանի: Եթե մեկ առ մեկ քննարկենք անցյալ ընտրություններում Սերժ Սարգսյանի եւ ՀՀԿ-ի որդեգրած ծրագրերը, անգամ քրերեն հետաղնդելի դրույթներ կան՝ ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային տեսանկյունից, որոնք ես պատրաստվում եմ վիճարկել դատարանում:

- Ինչի՞ մասին է խոսքը:

- Նախագահ Սարգսյանի նախընտրական ծրագրի 6-րդ դրույթը, որ ստացել է ՀՀԿ քաղխորհրդի հավանությունը եւ արդեն չորս տարի կյանքի է կոչվում, ամրագրում է. «Ցանկացած հայ ընտանիքի համար կրթությունը եւ գիտելիքը կլինեն ամենամեծ պահանջարկ վայելող արժեքները»: Մինչդեռ ՀՀ-ում բնակվում են ռուսներ, հույներ. 22 ազգերի ներկայացուցիչներ: Ո՞ր ղեկավարն է, որը համարձակվում է 21-րդ դարում նման ծրագրային դրույթով հանդես գալ: Ի՞նչ է, մնացյալ ազգային փոքրամասնությունների համար կրթությունը եւ գիտելիքն ամենամեծ պահանջարկ վայելող արժեքները չե՞ն արդյոք: Սրանից նացիոնալիզմի հոտ է փչում, որը նույնիսկ զզվելի է ընթերցել: Նման բաներ իրագործվում էին Հարավաֆրիկյան Հանրապետությունում Ապարտեիդի տարիներին, բայց, համենայնդեպս, նախագահների ծրագրում չէր ամրագրվում, ինչը կատարվեց ՀՀ-ում: Միգուցե հենց ա՞յս դրույթը նկատի ունենալով վերջերս ԱՄՆ կոնգրեսականներից մեկն ասաց, որ մնացածները պետք է Սերժ Սարգսյանից օրինակ վերցնեն:

Իսկ գիտեք՝ ինչո՞ւ է սա գրվել: Որովհետեւ ոչ Սերժ Սարգսյանն է սա ընթերցել, ոչ իր համախոհները, որովհետեւ գիտեն, որ ի սկզբանե այս ամեն ինչը սուտ է: Ահա մեր իրականությունը: Իսկ դուք ասում եք՝ ցուցակ, ինչ-որ անուններ, որ այնտեղ կան գրված... ՀՀԿ-ն ազգակործան գործունեություն ծավալեց Հայաստանում: Ընդունելով աղքատությունը 12,3 տոկոս՝ այսօր վիճակագրական տվյալներով՝ 38, իսկ իրականում 70 տոկոս աղքատություն է: Ծայրագույն աղքատները 25 տոկոս են: Իսկ նրանք, կներեք նման համեմատության համար, մարդիկ են, որ քուջուջ են անում աղբանոցներում: ՀՀԿ-ն ինչ ցուցակ էլ հրապարակի՝ մարդը գիտի, որ ինքն օրեցօր ավելի վատ է ապրում սրանց իշխանության պայմաններում: Սրանք նորից ամեն ինչ անելու են, որ վերարտադրվեն, եւ այս պարագայում, երբ ԱՄՆ դեսպանը հայտարարություններ է անում Հրազդանի ընտրությունների մասին՝ չխորանալով նյութի մեջ, ստացվում է, որ այլ երկրների դիվանագետների ձեռքերով գայլին գառան դիմակ են հագցնում՝ հետագայում ժողովրդի վրա շրխտելու համար:

Սերժի 2008-ի նախընտրական ծրագրում այլ «արժեքավոր» դրույթներ էլ կան. «Հայկական ընտանիքների եկամուտներն առնվազն կկրկնապատկվեն»:

Էլ չեմ ասում խոստացած այն կենսաթոշակային բարեփոխումների մասին, որոնք պետք է քաղաքացու համար արժանապատիվ կյանք ապահովեն: ՀՀ տարածքում մոտ 530 հազար թոշակառու կա: Ես դիմում եմ նրանց. եթե կես միլիոն մարդուց մեկը գա եւ ասի՝ պարոն Եղիազարյան, ինչպես չեք ամաչում, վերջին չորս տարվա ընթացքում «կենսաթոշակային բարեփոխումների» արդյունքում ես այժմ ապրում եմ Սերժ Սարգսյանի խոստացած արժանապատիվ կյանքով, ես ներողություն կխնդրեմ Սերժ Սարգսյանից ու ամբողջ ՀՀԿ-ից: Ավելին, կքարոզեմ, որ ՀՀԿ-ին ձայն տան:

Այս ամբողջ սարկազմն ու ծաղրանքը 14 կետից է բաղկացած:

- Շաբաթ օրը կայացած ԲՀԿ համագումարում էլ քննադատության պակաս չկար, նույնիսկ տպավորություն էր, որ ընդդիմադիր կուսակցության համագումար է: ՀԱԿ-ում ոգեւորվա՞ծ են ԲՀԿ-ի այդ կեցվածքից, քանի որ սկզբունքորեն դեմ չէին ԲՀԿ-ի հետ քաղաքական համագործակցությանը:

- Ես իմ անունից եմ ասում՝ պատրաստ եմ Լյուցիֆերի հետ պայմանագիր կնքել, եթե ազգս, ՀՀ քաղաքացին արդյունքում դուրս կգա այս իրավիճակից: Լյուցիֆերը ոչ մի անգամ նման տմարդի քայլեր չի անի: Իսկ Վարդան Օսկանյանի ելույթը ողջունում եմ, ինչքան էլ, որպես մարդ, վատ տրամադրված լինեմ իր անձի նկատմամբ, որովհետեւ այդ ելույթում տեսա արտահայտություններ եւ ձեւակերպումներ, որոնք ես էլ նույնությամբ կանեի:

- Օսկանյանը 10 տարի իշխանության էր...

- Որպեսզի ներկայիս տձեւությունը կարողանանք ինչ-որ մի ձեւի մեջ բերել ու արդարացնել անտրամաբանական ու անմարդկային քայլերը, մի ձեւ ունենք՝ այս ամենի ոտքերն անցյալից են գալիս: Միշտ հայացքով հին իշխանությանն ենք ետ դառնում: Ի՞նչ եղավ է, թե երբ է Օսկանյանն աշխատել: Այսօր մարդն ասում է՝ եկեք կանգնենք, ուղղենք: Ես Օսկանյանի փաստաբանը չեմ, բայց երբ Օսկանյանը նախարար էր, ՀՀ-ում աղքատության շեմը 11,7 տոկոս էր: Արարատ Զուրաբյանն իրենց համագումարում ասաց՝ մարտի 1, Օսկանյան եւ այլն: Հասկանալով, որ Օսկանյանը, որպես արտգործնախարար, չէր կարող այդքան ներգրավված լինել, բայց մարտի 1-ի մեղավորները, այդ թվում՝ նաեւ Օսկանյանը, եթե մեղավոր է, միանշանակ պետք է պատասխան տան: Բայց ինչ վերաբերում է ելույթին, այո, ողջունում եմ, որովհետեւ այնտեղ նստած էր Սերժ Սարգսյանը եւ դիմահար լսեց այն, ինչը որ մարդիկ մտածում են իր մասին: Բայց չեմ ողջունում, որ Օսկանյանի եւ Գագիկ Ծառուկյանի ելույթներից հետո մարդիկ ձեւափոխվեն ու այլ թղթեր ստորագրեն՝ նոր եղբայրության, կոալիցիայի, ինչը, ցավոք, չեմ բացառում: Վերջում խոնարհաբար տիրոջը լսելը մեր քաղաքական իրականության բաղկացուցիչն է:

Զրույցը՝ ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

# ՀՀԿ ցուցակը քաղաքագետին չի դրդում «հավատալու», որ մի բան «կփոխվի»

«Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի» փորձագետ, քաղաքագետ Ռուբեն Մեհրաբյանը պատասխանելով «Առավոտի» հարցին՝ ըստ Ձեզ՝ Հանրապետական կուսակցության հրապարակած ցուցակը վստահություն ներշնչո՞ւմ է, կուսակցության հռչակած «Հավատանք, որ փոխենք» կարգախոսին համապատասխանո՞ւմ է, պատասխանեց. «Իհարկե՝ ոչ: Բայց ես առանձնապես այլ բան չէի էլ սպասում այդ ամենից: Ի վերջո, այն լոզունգը, որը հրապարակվեց՝ «Հավատանք, որ փոխենք», ի սկզբանե անլուրջ էր, որովհետեւ մինչեւ հիմա դեռ «Առաջ Հայաստանի» հաշվետվությունը տրված չէ: Ի՞նչ եղավ Հայաստանը՝ առաջ գնալով, որ հիմա էլ ասում են՝ հավատանք, որ փոխենք... Պարզ է, որ ցուցակն էլ պետք է բաղկացած լիներ հին, հնամաշ, բարոյապես մաշված անձանցից, որոնցից շատերը պարզապես հասարակական ալերգիա են առաջացնում զանգվածների մոտ եւ դրված են տեղերում, որոնք, ենթադրաբար, անցողիկ տեղեր են դեպի Ազգային ժողով: Եվ այս ցուցակի կազմակցությամբ հանրային վստահության մասին խոսելը մոտենում է ցինիզմի մատույցներին»:

Ինչ վերաբերում է «Ժառանգություն»-«Ազատ դեմոկրատներ» համատեղ ցուցակում տեղ գտած անակնկալներին եւ անհայտ մարդկանց, պարոն Մեհրաբյանը ասաց. «Գիտեք ի՞նչ, ի վերջո, անհայտ մարդկանց երկու ամիս ժամանակ կա հայտնի դառնալու համար, եւ ես չէի ասի, որ եթե մարդն անհայտ է, ուրեմն պետք է ցուցակում չլինի: Կտրականապես դեմ եմ նման մոտեցմանը: Նույնիսկ հակառակը կասեմ՝ այո, ինչքան շատ նոր մարդ լինի, այնքան քաղաքական դաշտի նորացման հավանականությունն ու հնարավորությունը կմեծանան»: Փաստորեն՝ այդ ցուցակը Ձեզ դո՞ւր է գալիս՝ մեր ճշտող հարցին, պարոն Մեհրաբյանը պատասխանեց. «Դուր գալն ավելի էմոցիոնալ բնորոշում է, բայց կարծում եմ, որ ինձ մոտավորապես հասկանալի է տրամաբանությունը, որով կազմվել է այդ ցուցակը, եւ ես կարծում եմ, որ դա հեռանկարային տրամաբանություն է՝ ներկայիս քաղաքական դաշտի իրավիճակը հաշվի առնելով»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ա
a r a v o t d a i l y
ԵՐԵՔՇԱԲԹԻ 20.03.2012

# ԺԱԿ-ը մասնակցելու է ընտրություններին՝ սատարելով ՀՀԿ-ին

## Կուսակցությանն են միացել նաեւ 16 հ/կ-ներ





ՖՈՏՈԼՈՒՐ

Նախօրեին կառավարության նիստերի դահլիճում «Ժողովրդավարություն եւ աշխատանք» կուսակցության համաժողովն էր, որի ժամանակ կուսակցության ղեկավար Սպարտակ Մելիքյանը հայտարարեց, որ ԺԱԿ-ը մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին սատարելու է Հայաստանի Հանրապետական կուսակցությանը:

Ս. Մելիքյանը իր ելույթում հայտնեց. «Ես լիազորված եմ հայտարարելու, որ «Ժողովրդավարություն եւ աշխատանք» կուսակցության Ազգային կոմիտեի ընդունած համապատասխան որոշման համաձայն, ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններին ԺԱԿ-ը մասնակցելու է՝ սատարելով ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած Հայաստանի Հանրապետական կուսակցությանը: Վստահորեն կարող եմ ասել, որ ԺԱԿ-ի համար կարեւորվել է այն սկզբունքայնությունն ու հետեւողականությունը, որ ՀՀԿ-ն՝ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, պատրաստ է դրսեւորել մեր երկրի եւ ժողովրդի համար կենսական նշանակության հարցերում: Մասնավորապես, մեզ համար ողջունելի է այն վճռականությունը, որով Հանրապետականը պատրաստվում է մասնակցել գալիք ընտրություններին, այնտեղ ունենալ բացարձակ մեծամասնություն եւ, հարկ եղած դեպքում, նաեւ ստանձնել միանձնյա պատասխանատվություն երկրի եւ ժողովրդի ապագայի համար: Սա, կարծում եմ, այն հիմնական նախապայմաններից մեկն է, որի շնորհիվ հնարավոր կլինի նախ հայոց խորհրդարանը զերծ պահել անհարկի միջկուսակցական հակասություններից, քաղաքական էժան առեւտրից, ապա բոլոր հնարավորությունները նպատակաուղղել իրապես արդյունավետ բարեփոխումների իրականացմանն ու շարքային քաղաքացու կյանքի պայմանների տեսանելի բարելավմանը»: Բացի այդ, նա հիշեցրեց, որ այս որոշումը կայացնելիս ԺԱԿ ղեկավարությունն, անշուշտ, առաջնորդվել է նաեւ Հանրապետականի հետ անցած 5 տարիների հաջող համագործակցության փորձով. «Մեզ հետ համագործակցելու Հանրապետականի պատրաստակամությունն, անշուշտ, մեր բազմամյա համատեղ աշխատանքի ճշգրիտ գնահատականն է: Մեր կուսակցության ապագայի համար անկյունաքարային նշանակություն ունեցան 2007 եւ 2008 թվականները, երբ համապետական ընտրությունների ժամանակ ԺԱԿ-ը որոշեց վեր կանգնել նեղ կուսակցական, անձնական ամբիցիաներից եւ սատարել Հանրապետական կուսակցությանը, նաեւ՝ Հանրապետականի ղեկավար եւ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանին: Այդ քայլերին մենք գնացինք գիտակցված՝ ելնելով այն կարեւոր իրողությունից, որ ԺԱԿ-ի ծրագրերը լիովին համահունչ էին Հանրապետականի ծրագրային առաջնահերթություններին եւ նպատակներին, իսկ Հանրապետականն էլ ԺԱԿ-ին պատրաստ էր ընկալել որպես արժանապատիվ, սրտացավ գործընկեր: Մեր գործընկերային հարաբերությունները հետագա տարիներին բազմիցս դրսեւորվեցին կառուցողական հարթության վրա: Մասնավորապես, մասնակցելով ՏԻՄ ընտրություններին, ԺԱԿ-ի աջակցությամբ թեկնածուներից շատերը դարձան համայնքի ղեկավարներ, ավագանու անդամներ եւ այսօր էլ հաջողությամբ շարունակում են իրենց հայրենանպաստ աշխատանքը: Ի դեպ, դեռ 2007 թվականին մեզ հաջողվեց մեր շուրջը համախմբել հանրային հնչողության գործընթացներում ակտիվություն դրսեւորած մի շարք կազմակերպությունների, որոնց հետ համակողմանի համագործակցությունը լայն թափով շարունակվում է մինչ օրս, բայց ավելի մեծ եւ համալրված կազմով: Եվ մեր համագործակցության գնահատականն այն է, որ նրանք այսօր, այս պահին, այս դահլիճում դարձյալ մեզ հետ են»:

ԺԱԿ-ին աջակցող այդ 16 հասարակական կազմակերպությունների՝ «Գարդմանահայոց միություն», «Համայնք եւ իրավունք», «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» եւ այլ հ/կ-ների ներկայացուցիչներն էլ ԺԱԿ-ի ղեկավարից հետո ելույթ ունեցան եւ հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ գալիք խորհրդարանական ընտրություններին սատարել ՀՀԿ-ին: «Ահազանգ» հայ փախստականների միության գործադիր տնօրեն Ջուլիետա Երեմյանը բացատրեց, թե ինչու են իրենք էլ միանում ԺԱԿ-ին. «Սպարտակ Մելիքյանը միշտ եղել է մեր կողքին, մեծարել մեզ: Մենք միասին ենք ԺԱԿ-ի հետ եւ սատարելու ենք ՀՀԿ-ին»:

ԺԱԿ-ի համագումարին որպես պատվավոր հյուր մասնակցում էր նաեւ «Վիրահայերի միության» նախագահ Տաճատ Վարդապետյանը, որն իր խոսքում ասաց. «Ուրախ եմ, որ ԺԱԿ-ի այս հերթական համագումարը անցնում է այսպիսի լեփ-լեցուն դահլիճում: Կուսակցության անդամների շնորհակալ ներկայությունը հավաստում է այն մասին, որ այս կուսակցությունն ունի իր թիմակիցները եւ հավատարիմ է իր քաղաքական սկզբունքներին»:

ՀՀԿ ներկայացուցիչ, ԱԺ ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյանը բոլոր ելույթներից հետո ավելացրեց. «Ես պատիվ ունեմ Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի անունից ողջունելու ձեր համաժողովը: Մենք մեր երախտիքի խոսքն ենք հայտնում ԺԱԿ-ին եւ այս կուսակցության կողքին գտնվող կազմակերպություններին: Այն հավատը, որ կա մեր կուսակցության նկատմամբ, մեզ հաղթանակ է բերելու, որը կլինի մեր ժողովրդի եւ ձեր հաղթանակը»:

Նկատենք, որ 1 ամսից լրանալու է «Ժողովրդավարություն եւ Աշխատանք» կուսակցության հիմնադրման 8-րդ տարեդարձը:

R

### Պատգամավոր դառնալուց չի հրաժարվի

Երեկ Aravot.am-ը ԱԺ գյումրեցի պատգամավոր Սուքիաս Ավետիսյանից հետաքրքրվեց, թե ինչո՞ւ իր անունը չկա ՀՀԿ-ի համամասնական ցուցակի առաջին 76 անունների մեջ, մի՞թե նա այլեւս չի ուզում շարունակել իր պատգամավորական աշխատանքը: Նշենք, որ ՀՀԿ-ի համամասնական ցուցակում կան ինչպես Շիրակի գեներալ մարզպետ Աշոտ Գիզիրյանի, այնպես էլ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի անունները. Գիզիրյանը 66-րդ տեղում է՝ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ու Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանի արանքում, իսկ Գյումրու քաղաքապետը՝ 71-րդ հորիզոնականում՝ Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանից առաջ: Այս երկու բարձրաստիճան պաշտոնյաներից բացի, Շիրակի մարզը ներկայացնող այլ անուններ չկան: «Ես չգիտեմ՝ դուք ինչ ցուցակ եք ընթերցել, բայց իմ անունը կա, եւ ես չեմ հրաժարվում պատգամավոր լինելուց: 250 հոգանոց ցուցակ է, մինչեւ վերջ կհրապարակվի, ու այդ ժամանակ իմ անունը կտեսնեք»,- ասաց Սուքիաս Ավետիսյանը:

Իսկ ինչպե՞ս կմեկնաբանի ՀՀԿ-ական պատգամավորը մարզպետի ու քաղաքապետի պատգամավորացու լինելու փաստը, ինչո՞ւ են նրանց գցել ցուցակի վերջին տեղերում: «Վերջին ու առաջին չկա, ամեն մարդ իր տեղում է», կարճ կապեց Սուքիաս Ավետիսյանը՝ ՀՀԿ-ի ցուցակին անուն դնողներին էլ խորհուրդ տալով համբերել, ցուցակը մինչեւ վերջ ընթերցել ու նոր միայն եզրահանգումներ անել:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# «Ժառանգությունը» հրապարակեց իր համամասնական ցուցակը

## Բայց չի բացառվում, որ այն կարող է վերանայվել

Կիրակի օրը «Ժառանգություն» կուսակցությունը հրապարակեց մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցության իր համամասնական, նաեւ մեծամասնական ցուցակը, որից պարզ դարձավ, որ «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունները հանդես կգան միասնական ճակատով, բայց ոչ նախընտրական դաշինքով: Ավելի պարզ ասած՝ «Ժառանգությունը» ԿԸՀ կներկայացնի «Ժառանգության» համամասնական ցուցակը, որտեղ, ըստ էության, հավասար համամասնությամբ ներկայացված կլինեն եւ այս կուսակցության, եւ «Ազատ դեմոկրատների» ներկայացուցիչները: Ու մինչ հիշյալ երկու ուժերի ներկայացուցիչները հանդես կգային հրապարակված համատեղ ցուցակի առնչությամբ եւ ինչ-որ բաներ կասեին՝ այդ ցուցակը դարձավ հանրային կոշտ քննադատության թիրախ, որի առանձին պատառիկներ հրապարակվեցին նաեւ Facebook սոցցանցում: Պարզվեց նաեւ, որ այդ ցուցակից, մասնավորապես՝ այնտեղ հանգրվանած առանձին անհատների (ռադիոլրագրող Արաքս Պողոսյանի եւ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տնօրեն Թեւան Պողոսյանի) եւ ոչ միայն այդ, այլեւ հերթականության մասով դժգոհներ կան ոչ միայն քաղաքականապես ակտիվ քաղաքացիների շրջանում, այլեւ երկու կուսակցություններում էլ:

Հրապարակված համամասնական ցուցակում առաջին 20 տեղերում հերթականությունն այսպիսին է. Րաֆֆի Կ. Հովհաննիսյան, Խաչատուր Քոքոբելյան, Զարուհի Փոստանջյան, Ալիկ Արզումանյան, Ռուբեն Հակոբյան, Թեւան Պողոսյան՝ անկուսակցական, ՄԶՄԿ նախագահ, Մասիս Այվազյան, Ստյոպա Սաֆարյան, Իզաբելլա Աբգարյան՝ անկուսակցական, բլոգեր, Արմեն Մուշեղյան՝ անկուսակցական, հաշմանդամների «Աշխարհն առանց արգելքների» ՀԿ, Անուշ Սեդրակյան, Արտակ Ղազարյան՝ անկուսակցական, տնտեսագետ, Գառնիկ Սահակյան, Անահիտ Բախշյան, Հովհաննես Ղազարյան, Արմեն Մարտիրոսյան, Արաքս Պողոսյան՝ անկուսակցական, ռադիոլրագրող, Կարապետ Ռուբինյան՝ անկուսակցական, Հովսեփ Խուրշուդյան եւ Կարեն Կարապետյան: «Ժառանգության» համակիրներից շատերի համար անընդունելի էր եղել այն, որ կուսակցության եւ խմբակցության ամենաակտիվ անդամներից մեկը՝ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը հայտնվել էր ընդամենը 16-րդ տեղում, իսկ ահա 6-րդ տեղում 2008-ին Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանած Թեւան Պողոսյանն էր հանգրվանել: Համամասնական ցուցակի ամենաստորին հատվածում՝ 41-րդ տեղում, փաստորեն՝ զուտ խորհրդանշական առումով, կլինի «Ժառանգության» պատգամավոր Լարիսա Ալավերդյանը:

Արդեն երեկ տեղեկություններ էին շրջանառվում, թե «Ժառանգության» ու «Ազատ դեմոկրատների» ղեկավարությունը մտադիր է վերանայել եւ էական փոփոխություններ կատարել դժգոհությունների առիթ դարձած այդ ցուցակում, թեեւ «Ժառանգությունում» այս փաստը ոչ պաշտոնապես հաստատում էին, ոչ՝ բացառում: Թե ի՞նչ փոփոխություններ կարող են լինել հրապարակված համամասնական ցուցակում կամ ընդհանրապես կլինե՞ն՝ հավանական է, որ հայտնի կդառնա արդեն այսօր: Փոխարենը կուսակցությունը ընտրացուցակների ֆոնին առաջացած տարաձայնությունների պատճառով լքելու եւ ընտրություններին «Ժառանգության» ցուցակով մասնակցելուց հրաժարվելու մասին երեկ հայտարարել է այդ կուսակցության վարչության քարտուղար Կարինե Հակոբյանը: Նա ու իր արդեն նախկին կուսակիցները, որքանով հասկացանք լրատվամիջոցների երեկվա լրահոսից, իրար փոխադարձաբար շնորհակալություն են հայտնել համատեղ աշխատանքի համար, միմյանց հաջողություն են մաղթել ու հրաժեշտ տվել:

Ինչ վերաբերում է «Ժառանգության» մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների առաջադրումներին, ապա կուսակցությունը դեռ կիրակի օրը հրապարակեց ութ հոգու անուն՝ Ստյոպա Սաֆարյան՝ թիվ 1 ընտրատարածք, Զարուհի Փոստանջյան՝ թիվ 4, Արմեն Մարտիրոսյան՝ թիվ 6, Ռուբեն Հակոբյան՝ թիվ 9, Անահիտ Բախշյան՝ թիվ 12, Ռոբերտ Շահբազյան՝ թիվ 20 եւ Գագիկ Մարգարյան՝ թիվ 21: Ինչպես տեսնում ենք՝ այս ցանկում «Ազատ դեմոկրատների» մեծամասնական առաջադրումների վերաբերյալ ոչինչ կամ որեւէ թեկնածուի մասին, գոնե առայժմ, խոսք չկա: «Ազատ դեմոկրատները» «Ժառանգության» այս ցուցակների հրապարակումից հետո որեւէ պաշտոնական հայտարարությամբ դեռեւս հանդես չի եկել, թեեւ որոշ լրատվամիջոցների մատուցմամբ, նախընտրական ցուցակների վերաբերյալ որոշակի, բայց բարձրաձայնելու համար, թերեւս, ոչ բավարար դժգոհություններ կան երկու կուսակցություններում էլ:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Սարյանցի երեխաները գնդակ խաղալու տեղ էլ չունեն

Սարյան 24-26 շենքերի բնակիչները դիմել էին քաղաքապետարան՝ խաղահրապարակի համար, սակայն պարզել են, որ այդ տարածքում մի նոր օբյեկտ է կառուցվելու:



Մայրաքաղաքի բակերը բարեկարգելու, երեխաների համար խաղահրապարակներ կառուցելու քաղաքապետարանի որոշումը, որը քաղաքի բոլոր շրջաններում, կարելի է ասել, բուռն ընթացքի մեջ է, շրջանցել է

Սարյան 24, 24 ա, 24 բ եւ 26 շենքերի բակը: Այս հասցեի բնակիչներն էլ փորձել են իրենց հաշվին բակում խաղահրապարակ կառուցել եւ այդ նախագիծն իրագործելու համար ամիսներ առաջ բազմաթիվ դիմել էին Երեւանի քաղաքապետարան, սակայն պարզել են, որ կաթսայատան տարածքը, որտեղ ծրագրել էին խաղահրապարակը կառուցել, արդեն օտարված է:

Արդեն 2-րդ ամիսն է՝ Սարյան 24/5 հասցեի կաթսայատան տարածքում բուռն շինարարություն է ընթանում, եւ ինչպես կառուցապատողն է բակի բնակիչներին հայտնել, կառուցվելու է հասարակական սպասարկման նշանակության օբյեկտ, իսկ ավելի կոնկրետ՝ ցուցասրահ:

Սակայն բնակիչների համար այդ հատվածում որեւէ նոր շինություն կառուցելը ուղղակի անընդունելի է, քանի որ տարածքը առանց այն էլ խիտ բնակեցված է, անցուղարձի ու մեքենաների կայանատեղի չկա, երեխաների համար էլ անգամ գնդակ գլորելու տեղ չի մնում: Բացի այդ, ըստ բնակիչների՝ նոր շինությունը փակելու է հարակից շենքի 1-2-րդ հարկերի բնակարաններ թափանցող բնական լույսը:

«Առավոտի» հետ զրույցում բնակիչները պատմեցին, որ կառուցապատողի հետ հանդիպել են, նա էլ վստահեցրել է, որ շենքի բարձրությունը չի փակի բնակարանների լույսը. «Բայց մենք ի՞նչ իմանանք՝ ինչ են կառուցելու, ոչ մի նախագիծ ցույց չեն տալիս, միայն բանավոր երդումներ են տալիս, որ բարձր չի լինելու շենքը: Ամռանն օդ չի լինում շնչելու, գեղեցկության սրահի եւ «Բերլոգա» սրճարանի օդափոխիչները մեզ խեղդամահ են անում: Ուրիշ բակերում խաղահրապարակ են կառուցում, նստարաններ են տեղադրում, իսկ մեզ էս մի փոքրիկ տարածքից էլ են զրկում: Փոխանակ քաղաքապետարանը բակը բարեկարգի, եղածն էլ վաճառում է»: Բնակիչներից մեկի՝ Կարինե Գրիգորյանի խոսքերով՝ «Եթե այս կառուցապատողը, որը ծրագրել է ցուցասրահ կառուցել, վաղը որոշի վաճառել իր օբյեկտը, ի՞նչ երաշխիք, որ նոր սեփականատերը այն չի դարձնի ասենք՝ բիլիարդանոց կամ էլ այլ զվարճանքի օբյեկտ»: Այս ամենից առավել բնակիչներին մտահոգում է, որ իրենց երեխաները զրկված են բակում խաղալու իրավունքից ու հաճույքից: Նրանց ներկայացմամբ՝ առանց այն էլ շենք ելումուտ անելու համար ընդամենը մի նեղլիկ փողոց ունեն, որն էլ փակում են նրանց շենքի հարեւանությամբ գտնվող հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակիցների մեքենաները, որոնք կայանում են բնակիչների շենքի դիմաց:

Շինարարությունը կասեցնելու համար տարածքում առկա 3-4 շենքերի մոտ 1000 բնակիչներ ստորագրությամբ դիմել են ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ խնդրելով բարեկարգել բակը, նստարաններ տեղադրել, իսկ երեխաների համար էլ խաղահրապարակ կառուցել: Վարչապետին ուղղված այս դիմումը մակագրվել է Երեւանի քաղաքապետարան, եւ քաղաքապետ Տարոն Մարգարյանի ստորագրությամբ բնակիչներին գրավոր հավաստիացրել են, որ բնակիչների բողոքները հիմնավորված չեն՝ հաշվի առնելով որ. «…Կաթսայատունն օտարվել է Երեւանի համայնքի ավագանու 23.12.2009թ. հ. 55-Ն որոշմամբ սահմանված դրույթներին համապատասխան Երեւան քաղաքի սեփականություն համարվող գույքի օգտագործման տրամադրելու եւ օտարման աճուրդը եւ մրցույթը կազմակերպող եւ անցկացնող հանձնաժողովի միջոցով, որի մասին տեղեկացվել է www.yerevan.am կայքում եւ մամուլում: Կաթսայատունը Երեւանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ օտարվել է Արա Արսենյանին: Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված կարգի համապատասխան՝ Արա Արսենյանին տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, համաձայնեցվել է հասարակական սպասարկման նշանակության օբյեկտի (գրասենյակ) նախագիծ եւ տրվել շինթույլտվություն»:

Սրան ի պատասխան՝ մեզ հետ զրույցում բնակիչներն ասացին. «Ստացվում է, որ նախկին քաղաքապետն է մեր երեխաներին զրկել խաղահրապարակից»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

## Անձրեւատարները մաքրվում են



«Երեւան Ջուր» ՓԲԸ աշխատակիցները մարտի առաջին օրերից ձեռնամուխ են եղել մայրաքաղաքի անձրեւատար համակարգի մաքրմանը:

Նշենք, որ ամեն տարի երկու անգամ պարտադիր՝ գարնանը եւ աշնանը, իսկ առավել «խոցելի» վայրերում՝ ավելի հաճախակի, ընկերության «Արեւելք» եւ «Արեւմուտք» շահագործման տնօրինությունների բոլոր տարածքային տեղամասերի աշխատակիցները մաքրում են (նաեւ բարձր ճնշման օդ փչող հատուկ մեքենաների օգնությամբ) կուտակված աղբից ինչպես փողոցների անձրեւընդունիչների դիտահորերը, այնպես էլ խողովակաշարերը: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում ապահովվել ձյան հալոցքից ու անձրեւներից առաջացող ջրերի անխափան հեռացումը եւ այդ միջոցով խուսափել ջրերի կուտակումներից փողոցներում:

Միաժամանակ նորոգվում են վնասված անձրեւընդունիչների թուջե ցանցերը, ինչպես նաեւ տեղադրվում նորերը: Ցավոք, վերջին հանգամանքը բացատրվում է ոչ միայն ծանրաբեռնված տրանսպորտային միջոցների երթեւեկի պատճառով նշված ցանցերի կոտրվելու փաստով, այլ նաեւ դրանց շարունակվող գողությամբ: Այս կապակցությամբ ընկերությունը հարկ է համարում հիշեցնել, որ նման արարքները քրեորեն պատժելի են: Մասնավորապես, 2011թ. ոստիկանության կողմից բացահայտվել են անձրեւընդունիչների ցանցերի եւ դիտահորերի կափարիչների առեւանգման մի քանի դեպքեր, իսկ մեղավոր անձինք պատժվել են: Օրինակ՝ 159 ցանցերի եւ կափարիչների գողության փաստով Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից Արմեն Մարտիրոսյանը, Վահան Ավագյանը եւ Անուշավան Գալստյանը դատապարտվել են 3,2-3,4 տարվա ազատազրկման, 5մլն 151 հազար դրամի բռնագանձմամբ՝ պատճառված վնասի դիմաց:

Անձրեւատար համակարգի մաքրման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչեւ ապրիլի վերջը:

## Աջափնյակի մի մասը կջրազրկվի

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 20-ին, ժամը 10.00-24.00-ը, կդադարեցվի Աջափնյակ վարչական շրջանի Վշտունի եւ Խ. Խաչատրյան փողոցների ու նրբանցքների, Բաշինջաղյան, Լենինգրադյան, Ջանիբեկյան, Կարապետյան, Ռոստոմյան, Ա. Սարգսյան, Մարտիրոսյան, Չուխաջյան, Հասմիկի, Մելիքյան, Միրաքյան, Սպորտի, Գ. Ջոհրապի, Լեւոնյան, Եղիազարյան, Առաքելյան, Հակոբյանց, Լենինականի, Թերլեմեզյան փողոցների եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ
հաղորդակցության բաժին

## «Արմավիան» ու «Զվարթնոցը» նորից պայմանավորվել են




Չնայած «Արմավիա» ավիաընկերության եւ «Զվարթնոց» օդանավակայանի միջեւ մարտի 15-ին կնքվել էր համաձայնագիր, որի համաձայն՝ ազգային ավիափոխադրողը պարտավորվել էր 6 ամիսների ընթացքում մարել կուտակած 5 միլիոն 300 հազար դոլար պարտքը, իսկ օդանավակայանն էլ դրա դիմաց պատրաստակամություն էր հայտնել նվազեցնել սպասարկման սակագները, սակայն արդեն մարտի 16-ին «Արմավիան» հայտարարեց, որ օդանավակայանը չի կատարում համաձայնագրով ստանձնած պարտավորությունները:

Երեկ ավիացիային մոտ կանգնած «Առավոտի» աղբյուրները հայտնեցին, որ այս երկու տնտեսվարողների միջեւ ընթացող բանակցությունները կարծես թե վերջնագծին են հասնում: Կողմերը կրկին պայմանավորվել են, որ «Արմավիան» սահմանված ժամկետում պարտքը մարելու է, իսկ օդանավակայանն էլ մարտի 20-ից սկսած՝ նոր սակագներ է կիրառելու ազգային ավիափոխադրողի համար: Ներկայումս «Արմավիան» ու օդանավակայանը աշխատում են աշխատանքային նորմալ ռեժիմով, եւ բոլոր չվերթները կատարվում են ժամանակին:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Ռոսավիացիան նույնպես նամակ է ուղարկել «Արմավիային»՝ տեղեկացնելով, որ ընկերության դիմաց որեւէ սահմանափակումներ՝ թռիչքների համար, չկան:

Սեփ. լր.

Առավոտ
a r a v o t d a i l y
ԵՐԵՔՇԱԲԹԻ 20.03.2012

# Ոչ թե Մաշտոցի, այլ՝ Դեմիրճյան պուրակ

Շուրջ մեկ ամիս է, ինչ Երեւանի կենտրոնում հանրային կանաչ տարածքի սեփականության իրավունքը պաշտպանող քաղաքացիները պայքարում են հասարակական պուրակի փրկության համար: Եվ քաղաքապետարանի պատասխանատուները, եւ ՀՀ ԱԺ պատգամավորները, մտավորականները, բնապահպանները եւ երեւանցիներից շատերը տարբեր անուններով են կոչում պուրակը: Իսկ իրականությունը սա է:

Ճարտարապետ Արմեն Զարյանի նախագծով (1971թ.) մայրաքաղաքի կենտրոնում նախատեսվում էր կառուցել Գլխավոր պողոտա, որը պետք է դառնար հանգստի ինքնատիպ գոտի: Այն սկսվում էր Սարյան փողոցից եւ ձգվում մինչեւ Ալեք Մանուկյան փողոց: Կառուցվեցին պողոտայի երկու հատվածները: Սարյան-Եզնիկ Կողբացի հատվածը, որը լուծված էր ավազաններով եւ շատրվաններով հարուստ պուրակի ձեւով, 1999թ. անվանակոչվեց Կարեն Դեմիրճյան պողոտա (քաղաքապետ՝ Ալբերտ Բազեյան): Այդ մասին է վկայում նաեւ պողոտայի Սարյան-Մաշտոց հատվածում, Եղիշե Չարենցի տուն-թանգարանի դիմաց տեղադրված հուշաքարը, որտեղ այդպես էլ չի տեղադրվում Հայաստանի Ազգային հերոսի արձանը: Տարօրինակ է Դեմիրճյանների ընտանիքի լռությունը: Երկրորդ հատվածը սկսվում է Նալբանդյան փողոցից եւ շարունակում է կոչվել Գլխավոր պողոտա: Ի դեպ, քաղաքապետարանի 2011թ. աշնանը անգլերեն լեզվով հրատարակած հավակնոտ վերնագրով «Երեւան: Պաշտոնական ուղեցույց»-ի երկու քարտեզներում էլ նշված է Կարեն Դեմիրճյան պողոտան, սակայն բացակայում է Գլխավոր պողոտան: Սա՝ ի գիտություն:



Ինչ վերաբերում է պողոտա-պուրակի այդ հատվածին եւ, ընդհանրապես, մայրաքաղաքի կանաչ գոտիների պահպանմանը, ապա ուզում եմ հիշեցնել, թե մեր նախնիները ինչպես են լուծել այդ հարցը: Հայոց արքաները համոզված էին, որ անտառը երկրի համար նույնն է, ինչ հացը՝ մարդ արարածի: Նրանք ծառն անտեղի հատող յուրաքանչյուր անձի՝ անկախ դիրքից ու արյան մաքրությունից, մեկ տարի պահում էին զնդանում: Կալանավորն օգտվում էր աշխարհի բոլոր բարիքներից, սկսած համադամ խորտիկներից՝ վերջացրած հրաբորբ գինիներով: Նրա սեղանից միայն հացն էր բացակայում: Մեկ տարի անց դուրս գալով զնդանից՝ մարդն ապաշխարած էր լինում ավելի քան: Սննդի մեջ հացի բացակայությունը հասցնում էր նրան, գրեթե, կիսամեռ վիճակի: Այսպես է եղել:

Խոսքս ցանկանում եմ ավարտել մեկ տողով՝ ճապոնական պոեզիայից. «Ինձ քարկոծե՛ք, ես այսօր նոր ծաղկած բալենու ճյուղ կոտրեցի»: Այսպես պետք է լինի:

ՀՌԻՓՍԻՄԵ ՍԻՄՈՆՅԱՆ

«Սա մեր երկիրն է, Հայաստան» գրքի հեղինակ

## Մահացել է

«ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Խանջյան փողոցից դեպի Հերացու փողոց տանող նորակառույց ճանապարհին՝ Չարենցի փողոցի թիվ 4 շենքի մոտ, վրաերթի է ենթարկել անձը չպարզված, մոտ 70 տարեկան տղամարդու, որը տեղում մահացել է:

## Ընկել է Դեբեդ գետը

Մարտի 18-ին, ժամը 20.00-ի սահմաններում, «ԳԱԶ-322132» մակնիշի ավտոմեքենան Թումանյան քաղաքի Թումանյան փողոցում բախվել է ճանապարհի արգելապատնեշին եւ ընկել Դեբեդ գետը: Պատահարի հետեւանքով վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

## Բախվել է պատին

«Ֆոլքսվագեն Պասսատ» մակնիշի ավտոմեքենան Շիրակի մարզի Հոռոմ գյուղում բախվել է շենքի պատին, ինչի հետեւանքով ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

## Հետախուզվողը հայտնաբերվեց

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները Վանթյան փողոցից բերման են ենթարկել 48-ամյա մի տղամարդու, որը 2011թ. հոկտեմբերի 21-ից հետախուզվում էր անզգուշությամբ մահ պատճառելու եւ դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու մեղադրանքով:

## Զավեշտ

Դալմայի այգիների մի մեծ կանաչ հատված բետոնապատվեց, հսկայական կոմպլեքս կառուցվեց, անունը դրվեց Դալմա, խորհրդանիշն էլ՝ կանաչ ծառ:

Մաշտոցի այգու ավելի քան 10.000 քմ տարածքի կառուցապատման, նույնն է՝ բետոնապատման իրավունքը տրվել է «Կենտրոն-կանաչապատում» ՓԲԸ-ին, որն էլ սկսել էր կանաչ տարածքների բետոնապատումը, մինչեւ ինչ-որ մի փուլում բնապահպանների բողոքի ակցիաների հիման վրա կասեցվեց:

Նույն տեղից 250քմ տարածք էլ տրվել է «Արեւելյան օազիս» ՍՊԸ-ին, բնականաբար, նորից բետոնապատելու եւ տաղավարներ տեղադրելու համար:

Կարո՞ղ ա մեր շինովնիկները կանաչը ասոցացնում են միայն մի բանի հետ:

ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Փաստաբան

# Տաքսիստը 2000 դրամ պարտքի հետեւից գնալով՝ ձերբակալվել է Վրաստանում

Շուրջ 5 օր է, ինչ Տավուշի մարզի Կողբ գյուղի 37-ամյա բնակիչ, «Կողբ» տաքսի ծառայության վարորդ Արմեն Բարսեղյանը Վրաստանում ձերբակալված է: Նրա գործընկերները հայտնեցին, որ Արմենի հեռախոսն անջատված է, եւ նրա գտնվելու վայրի մասին տեղեկություն չկա: Դեբեդի հովտում հայ-վրացական սահմանը հսկող զինվորներից մեկը տաքսիստին՝ որպես փոխադրավարձ, 2 հազար դրամ պարտք է եղել: Արմենը Բագրատաշենի մաքսակետ տանող միջպետական մայրուղու եզրին, Դեբեդի ամբարտակ ծառայող կամրջի վրա զինվորներ է տեսել: Փաստորեն կամուրջը հայ-վրացական սահման է հանդիսանում, սակայն սահմանի մասին նախազգուշական ցուցանակ չկա: Արմենը զինվորներ տեսնելով՝ կարծել է, որ իրեն գումար պարտք սահմանապահ հայ զինվորը կարող է նրանց մեջ լինել: Նա կամրջով քայլելով՝ հայտնվել է վրացական տարածքում, վրաց սահմանապահների մոտ: Սահմանապահներն Արմենի մոտ, բացի իր անձնագրից, գտել են նաեւ Ալավերդու մի բնակչի անձնագիր: Այդ բնակիչը փոխադրավարձը չկարողանալով վճարել՝ իր անձնագիրը տաքսիստին գրավ է թողել: Վրաց սահմանապահներն այդ պատճառով կողբեցուն հետախույզի տեղ են դրել: Իրազեկ աղբյուրներն ասում են, որ Արմենի նկատմամբ Վրաստանում արագացված դատաքննություն է սկսվել, նրան մեծ տուգանք է սպասվում: Հայաստանի անկախանալուց 21 տարի անց բարեկամ երկիր Վրաստանի հետ դեռ սահմանազատում չի արված, սահմանագծի նշումները շատ տեղերում բացակայում են:



ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Խախտումների դինամիկան



ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը հաստատել է մի շարք ոլորտներում եւ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ Կոտայքի մարզպետարանում, Աբովյանի, Եղվարդի, Հրազդանի, Չարենցավանի Սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում (ՍԾՏԳ) եւ քաղաքապետարաններում կատարված ստուգման արդյունքների վերաբերյալ իր ընթացիկ հաշվետվությունները:

Ֆինանսական խախտումների ընդհանուր ծավալը կազմում է 50, 2 մլն դրամ, որից 19.5 մլն դրամը ենթակա է պետբյուջե վերականգնման, եւս 18.1 մլն դրամը՝ պետբյուջե վերադարձման, աշխատանքով հատուցման:

Ստուգումների արդյունքներով Կոտայքում հայտնաբերված խախտումներից «առանձնապես խոշորը» վերաբերում է քաղաքաշինության բնագավառին՝ 22.5 մլն դրամ եւ ՍԾՏԳ ներին՝ 21.5 մլն դրամ:

Քաղաքաշինության մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում անօրակ շինարարությանը՝ 18.1 մլն, իսկ ծավալային հավելագրումներին բաժին է ընկնում 4.4 մլն դրամ: Իսկ առողջապահության եւ կրթության ոլորտներում հայտնաբերված խախտումները կազմել են, համապատասխանաբար՝ 3 եւ 2 մլն դրամ:

## Բքի հետեւանքով

ԱԻՆ փրկարար ծառայությունից տեղեկացրին, որ Սյունիքի մարզի Սիսիան-Գորիս ավտոճանապարհին (Նորաշեն գյուղի հատված) բքի հետեւանքով վրաբեր ձյան մեջ արգելափակվել է ավտոմեքենա:

Հրշեջ-փրկարարները ճանապարհի երթեւեկելի մաս են դուրս բերել Աշտարակի բնակիչ Կարեն Պողոսյանին պատկանող «Միցուբիշի Պաջերո» մակնիշի 16 ՕՏ 652 պ/հ ավտոմեքենան:

## Դեղորայքից

Դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Սայաթ-Նովայի 29 շենքի 24-րդ բնակարանի բնակիչ, 1995թ. ծնված Սանար Հաճինյանը: Բժիշկների գնահատմամբ՝ տուժածի առողջական վիճակը ծանր է:

## Կորել էին արգելոցում

Սյունիքի մարզի Ծավ գյուղի մոտակայքում՝ «Արեւիկ» պարկ-արգելոցում, մոլորվել է նույն գյուղի 3 բնակիչ: Սյունիքի մազրային փրկարարական վարչության օպերատիվ խումբն «Արեւիկ» ազգային պարկի տնակներում հայտնաբերել է Կապանի բնակիչներ՝ 1967թ. ծնված Սպարտակ Թադեւոսյանին, 1967թ. ծնված Արթուր Սարգսյանին եւ 1970թ. ծնված Վարդան Գալստյանին: Նրանց առողջական վիճակը գնահատվել է բավարար:

## Վիճակը ծանր է

Ալավերդու Երեւանյան խճուղում տեղի էր ունեցել ավտոպատահար:

Դեռեւս չբացահայտված հանգամանքներում «ԳԱԶել» մակնիշի 0558 L պ/հ (վարորդ՝ 1962թ. ծնված Է. Ծատուրով) միկրոավտոբուսը դուրս էր եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ շրջվել հարակից ձորակը:

Հրշեջ-փրկարարները միկրոավտոբուսից դուրս են բերել վարորդ Էրիկ եւ ուղեւոր՝ 1994թ. ծնված Գեորգի Ծատուրովներին, որոնք տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Ալավերդու հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը կայուն ծանր է:

# Գիտությունն ունի արմատական փոփոխությունների եւ PR-ի կարիք

## Հարցազրույց կենսաբանական գիտությունների դոկտոր Աստղիկ Փեփոյանի հետ

- Ձեր կարծիքով՝ գիտությունն ու գիտնականն այսօր ունե՞ն PR-ի կարիք, եթե այո, ապա ի՞նչ եղանակով դա պետք է իրականացվի:

- PR-ը (Public relations՝ հասարակական հարաբերություններ) կազմակերպությունների եւ հասարակության միջեւ փոխշահավետ հարաբերություններ ապահովող ստրատեգիկ գործընթաց է: Գիտական PR-ի հիմնական նպատակներից է, օրինակ, գիտության արտադրայնացման նպաստումը: Գիտական սեկտորի եւ արտադրություն/ձեռնարկությունների միջեւ կապը, գիտական արդյունքների ինտենսիվ ներդրումն արտադրության մեջ, ցանկալի եւ կարեւոր է ցանկացած երկրի համար: Ինչքան էլ մենք մեզ քննադատում ենք, փաստ է, որ այսօր էլ՝ գիտության եւ գիտնականի համար այս ճգնաժամային պայմաններում անգամ, ՀՀ գիտնականների կողմից հաջողությամբ առաջարկվում են նաեւ կիրառական գիտական հետազոտական նախագծեր, որոնց արդյունքները կարող են ներդրվել արտադրության մեջ, եւ որոնք հետաքրքրում են արտասահմանյան տարբեր կազմակերպությունների: Այս նախագծերից որոշները կհետաքրքրեին նաեւ գործարարներին, եթե ունենայինք ձեւավորված գիտություն-արտադրություն հարաբերություններ, եթե նախ եւ առաջ ունենայինք իսկապես գիտության եւ գիտնականների, պետության համար շահագրգիռ համապատասխան կազմակերպություններ, որոնց գործառույթներն այսօր իրականացնում են ՀՀ ԳԱԱ-ն եւ Գիտության պետական կոմիտեն (ԳՊԿ):

Ընդհանրապես, գիտական PR-ի կարիքը բավականին մեծ է Հայաստանում, քանի որ մենք ունենք՝

1) Գիտության ցածր վարկանիշ: PR-ի գործունեության մի ուղղություն այս դեպքում պետք է ուղղված լինի գիտության նկատմամբ հասարակության բացասական պատկերացումների վերացմանը եւ օբյեկտիվ հիմքերի վրա դրական վերաբերմունքի ստեղծմանը:

2) Քաղաքական էլիտա, որը չի ընդունում, որ գիտությունն ու կրթությունը ՀՀ-ի զարգացման համար գերուղղություններ են: PR-ի նպատակն այս ուղղությամբ պետք է լինի փոխհամաձայնության կնքումը:

3) ՀՀ «գիտության կրիզիս»ը գլխավորապես ֆինանսական տեսանկյունից: PR-ի գործունեության ոլորտներից մեկն այս դեպքում կազմակերպությունների դժվարություններին արձագանքն է:

4) Գիտական կազմակերպությունների ղեկավարները չունեն բավարար գիտելիքներ, որպեսզի իրականացնեն մարքեթինգային գործունեություն: PR-ի միջոցով կարելի է լուծել կազմակերպության որոշ մարքեթինգային թերացումներ:

5) Ձգտում ենք ԵՄ մտնել, ուրեմն պետք է պատրաստ լինենք մեր եւ ԵՄ երկրների գիտահետազոտական ինստիտուտների միջեւ մրցակցությանը: Այստեղ PR-ի գործունեության ոլորտներից մեկը պետք է հանդիսանա մեր գիտության ամրապնդումը...

- Իսկ ինչպիսի՞ն է գիտության արտադրայնացման եւ PR-ի ներկա վիճակը Հայաստանում:

- Այսօր ԳՊԿ-ն կարծես թե փորձ է անում ՀՀ-ում «ստեղծելու» գիտություն- արտադրություն հարաբերություններ: Իրականում հիմնականում գիտություն- արտադրություն հարաբերությունների ձեւավորումը երկրում կախված է հասարակության կողմից գիտության «ընդունման» աստիճանից: Ինչքան բարձր է գիտության վարկը հասարակության մեջ, այնքան ամուր են գիտություն- արտադրություն փոխհարաբերությունները կամ՝ այս հարաբերությունների ձեւավորման համար անհրաժեշտ նախադրյալները:

Իմ կարծիքն այս ուղղությամբ ԳՊԿ գործընթացի վերաբերյալ այն է, որ դա պարզապես ԳՊԿ-ի կողմից նոր խաղ է, իր եւ իր մի քանի «զինակիցների» համար նոր ֆինանսական աղբյուրներ գտնելու միջոց: Համոզված եմ, որ «պետական հովանավորության» արդյունքում կֆինանսավորվեն մի քանի անհայտ կարեւորության ծրագրեր, եւ գործընթացը սրանով էլ կսահմանափակվի: Պետական մակարդակով գիտություն-արտադրություն փոխհարաբերությունը տեւական շարունակական գործընթաց է, այն կոչ չէ՝ «գիտնականներ, գտեք ձեռնարկատերերի, ովքեր Ձեզ կֆինանսավորեն, եթե մենք թողնենք (ստանաք պետական համաձայնություն)»:

ՀՀ-ում օբյեկտիվորեն պետք է բարձրացվի գիտության վարկանիշը: Կարծում եմ՝ հասարակ ժողովրդին էլ, ձեռնարկատերերին էլ իրականում այնքան էլ չեն հետաքրքրում ՅՈՒՆԵՍԿՕ-ի թվային տվյալները կամ «վիրտուալ» գիտությունը: Ժողովուրդն իր կողքին տեսնում է «խղճուկ» գիտնականի կերպարը, նրան անհանգստացնում է օրեցօր աճող սննդի, հիվանդությունների պրոբլեմը: Նրան անվստահություն են ներշնչում դարի գիտական նորարարությունները, օրինակ՝ գենետիկորեն մոդիֆիկացված սնունդ, «վաճառվող սինթետիկ» սննդամթերք եւ այլն: Եթե մարդիկ ընդունում են բժշկին, ուսուցչին, ապա երբեմնի գիր ու գիտություն հարգող, ՀՀ ԳԱԱ-ով հպարտացող ժողովուրդն այսօր չի հասկանում գիտնականների, մանավանդ՝ անընդհատ միմյանց վարկաբեկող գիտնականների անհրաժեշտությունը: Իհարկե, գիտության վարկանիշը կտրուկ կբարձրանա, եւ մենք գիտական PR-ի տեսանկյունից միանգամից կշահենք առաջինից երրորդ կետերը, եթե ընթացիկ գիտական քաղաքականության կամ ավելի պարզ**ո** ընթացիկ գիտական մոնոպոլիզացիոն քաղաքականության հիման վրա ունենանք, ասենք՝ Նոբելյան մրցանակակիր...ինչն անհավանական է, բայց ինչին կարծես մի քանի ընտրյալ գիտնականների ֆինանսավորման միջոցով ուզում է հասնել մեր Գիտպետկոմը:



- Ձեր կարծիքով՝ ո՞ւմ է ձեռնտու, որ գիտնականները լինեն խղճուկ, գլխիկոր ու միշտ կախյալ:

- Մի քիչ սուր ենք արտահայտվում, բայց ասվածի մեջ խորը ճշմարտություն կա: Գիտնականների խղճուկ եւ գլխիկոր ու միշտ կախյալ վիճակն, իհարկե, ձեռնտու է միայն թույլ եւ անվստահ ղեկավարին: Հետեւենք ԳՊԿ վերջին, բեկումային եւ գիտատեխնիկական գործունեության 2010 թվականի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթին, երբ ԳՊԿ-ն իբր մաքրեց գիտությունը ու թողեց առավել արժանավորներին: Ըստ ԳՊԿ նախագահ պարոն Սամվել Հարությունյանի, այս մրցույթի փորձագիտությունն անցկացվել է հիմք ընդունելով գիտական աշխատանքները: Չեմ ուզում նորից քննարկել՝ մամուլն անպատասխան բավականին անդրադարձել է այս թեմային... Դժվար չէ ֆինանսավորվածների ցուցակից առանձնացնել առանց համապատասխան աշխատանքներով ֆինանսավորվածներին կամ նույն տպագրությունների հիման վրա ԳՊԿ բազմակի ֆինանսավորվողների, եւ մենք կստանանք ԳՊԿ մեծաքանակ «երախտապարտների» ցուցակը: Նույնը վերաբերում է ԳԱԱ ընտրյալներին: Իմ քննադատություններն ավելի շատ ԳՊԿ մակարդակի են՝**ո** անիմաստ է անդրադառնալ, քննարկել կամ քննադատել ԳԱԱ գործունությունն ընդհանրապես, քանի որ ԳԱԱ-ն պարզապես անգործ է: Այստեղ սովորաբար զարմանալի աշխուժություն է միայն ընտրությունների ժամանակ:

- Լավ, ի՞նչ անել, որ վերականգնվի գիտության ու գիտնականի նախկին վարկն ու հեղինակությունը:

- Կեղծ գովազդը, ինչն այժմ անիմաստ օգտագործվում է մեր իշխանավորների կողմից՝ գիտնականի վարկը բարձրացնելու համար, կարծում եմ, շատ վտանգավոր է: Պետք է պարզապես ռեալ գիտությամբ եւ գիտական արդյունքներով, նաեւ գիտական PR-ի միջոցով վերականգնել գիտնականի նախկին վարկն ու հեղինակությունը: Իսկ դա կարելի է անել միայն գիտության բնագավառում արմատական փոփոխություններով:

- Ֆեյսբուքում եւ այլ սոցցանցերում քննարկումներ են ընթանում, երիտասարդական նախաձեռնություններ են ստեղծվել, որոնք պահանջում են ավելացնել գիտության ֆինանսավորումը: Ձեր կարծիքով՝ դա կփրկի՞ գիտությունը:

- Ես ծանոթ եմ միայն «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» (ՊԳՖԱ) էջին, եւ ինքս էլ մասնակցում եմ քննարկումներին: Կոնկրետ ինձ այդ էջը հնարավորություն տվեց ավելի «մոտիկից» ծանոթանալ բժշկակենսաբանական գիտություններից դուրս այլ բնագավառների երիտասարդ եւ հասուն գիտնականներին: Ինչ վերաբերում է ԳՊԿ- ՊԳՖԱ, ԳԱԱ-ՊԳՖԱ համագործակցությանը, սա գոնե ինձ համար անհասկանալի է, քանի որ ՊԳՖԱ-ի գոյությունն ու գործունեությունն արդեն իսկ ցույց է տալիս այս կառույցների թերացումները: ՊԳՖԱ-ի «գործը» իրականում ԳՊԿ-ի եւ ԳԱԱ-ի գործն է:

Ինչ վերաբերում է պահանջվող գումարով գիտնականների ու գիտության փրկությանը, իհարկե՝ դա ծիծաղելի է...

Զրուցեց ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆԸ

# Նոր «Կարմենը» կարճ կլինի եւ առանց ծանր դեկորների

## Ռեժիսոր Արմեն Մելիքսեթյանի բեմադրությունը պատրաստ կլինի աշնանը

Համաշխարհային օպերային արվեստի գանձերից ֆրանսիացի կոմպոզիտոր Բիզեի «Կարմենին» Ազգային օպերային թատրոնը առաջին անգամ անդրադարձել է 1940-41թթ.՝ անվանի ռեժիսոր Արմեն Գուլակյանի եւ բեմադրիչ, դիրիժոր Գեորգի Բուդաղյանի բեմադրությամբ: Դրանից հետո 5-6 տարին մեկ թարմացվել է, իսկ նորը 1970-ականների կեսերին իրականացրել են ռեժիսոր Վահագն Բագրատունին եւ դիրիժոր Յուրի Դավթյանը, որը թատրոնի խաղացանկում էր մինչեւ 1980-ականների վերջը: «Կարմենում» գլխավոր դերերգերով փայլել են ինչպես հայ, այնպես էլ հրավիրյալ երգիչները, այդ թվում՝ Տաթեւիկ Սազանդարյանը, Ելենա Օբրազցովան, Իրինա Արխիպովան, Օլգա Գաբայանը, Արսեն Սամվելյանը, Ֆեոդոր Օհանյանը, Վլադիմիր Ատլանտովը, Կարպիս Զոբյանը, Գեղամ Գրիգորյանը:

Օրերս կայացավ «Կարմենի» համերգային կատարումը, ինչին թատերայնություն էր հաղորդել ռեժիսոր Արմեն Մելիքսեթյանը, որի բեմադրությամբ հիշյալ օպերայի առաջնախաղը կայացել էր 2002թ., խաղացանկում մնալով շուրջ 2 տարի: Թատերասեր հանրությունը հավանաբար կարոտել էր սիրված օպերայի եռանդուն, կրակոտ, ռիթմիկ մեղեդուն՝ դահլիճը լեփ-լեցուն էր, ներկա էին նաեւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

«Առավոտը» Արմեն Մելիքսեթյանից նախ հետաքրքրվեց իր «Կարմենի» կարճատեւ կյանքով: Մեր զրուցակիցը դա բացատրեց դեկորների անհարմարավետությամբ (նկարիչ՝ Ռաֆայել Խաչատրյան), մանրամասնելով. «Ժամանակին թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեղամ Գրիգորյանը մտադրված էր «Կարմենը» բեմադրել Միլանի բացօթյա ամֆիթատրոնում եւ հենց այդ նպատակով էլ պատրաստվել էին մասշտաբային դեկորներ: Ինչ-ինչ պատճառներով նախագիծը չկայացավ, իսկ դեկորներն էլ, որոնք հավաքված էին անիվների վրա, հարմար չէին մեր թատրոնի բեմին»: Խոսելով օպերայի կայացած համերգային կատարման մասին՝ պարոն Մելիքսեթյանը նշեց, որ իր համար անակնկալ էին թատրոնի երիտասարդ մեներգիչների բարձրակարգ կատարումները, այդ թվում՝ Ինգա



Կարապետյանցի Կարմենը, Սարգիս Աղամալյանի Դոն Խոզեն, Գեւորգ Հակոբյանի Էսկամիլիոն, Նունե Բադալյանի Միքայելան, Հայկ Տիգրանյանի Ցունիգան: «Կարծում եմ՝ հնարավոր եղավ լիարժեք ներկայացնել «Կարմենը» թատրոնի երաժշտական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանի շնորհիվ, ով կանգնած էր այս նախագծի գլխին: Ես ընդամենը օգնել եմ նրան, այս դեպքում ոչ թե կարեւորելով միզանսցենները, այլ երգիչների ու կերպարների հարաբերությունները: Բիզեի կրքոտ երաժշտությունը հանդիսականին հասցնելու գործում անկասկած մեծ էր նվագախմբի (դիրիժոր՝ Կարեն Դուրգարյան) եւ երգչախմբի (խմբավար՝ Կարեն Սարգսյան) դերը»,- հայտնեց մեր զրուցակիցը:

Կարելի՞ է ենթադրել, թե «Կարմենի» նոր բեմադրությունը հենց ինքն էլ իրականացնելու է: Արմեն Մելիքսեթյանը ասաց, թե օպերային թատրոնի տնօրենի կողմից եղել է առաջարկ, իսկ նկարիչ Ավետիս Բարսեղյանի հետ արդեն սկսել են աշխատանքները. «Առաջիկա բեմադրության ժամանակ մասշտաբային դեկորներ, բնականաբար, չեն լինի: Կօգտագործվի նաեւ էկրանը: Այս օպերայի երաժշտությունն այնքան դինամիկ է ու շարժուն, որ արտիստներին պետք է հնարավորություն տալ դա արտահայտել ոչ միայն վոկալով, այլեւ խաղով, ինչի համար անհրաժեշտ է ընդարձակ տարածություն»: Իսկ մի շարք թատրոնների օրինակով չե՞ն պատրաստվում «երկարատեւ» «Կարմենը» կրճատել: Ռեժիսորը պատասխանեց. «Ես եւ Կարեն Դուրգարյանը հակված ենք «Կարմենի» 4 գործողությունը դարձնել 2՝ մեկ մեծ ընդմիջումով»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առավոտ aravot daily ԵՐԵՔՇԱԲԹԻ 20.03.2012

VIVAcell MTS ԷՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## 13 ուղեգիր, 2-ն էլ՝ մտքում



Այսօրվա դրությամբ Հայաստանի մարզիկները նվաճել են Լոնդոնի օլիմպիական խաղերի 13 հաստատված վարկանիշ:

Ամենից շատ՝ թիմային 6 ուղեգիր, վաստակել են մեր ծանրորդները, որոնք ամառային օլիմպիական խաղեր գործուղելու են 4 տղայի եւ 2 աղջկա: Մեկական ուղեգիր ունեն հունահռոմեական եւ ազատ ըմբշամարտը, բռնցքամարտը, հրաձգությունը, սպորտային մարմնամարզությունը, աթլետիկան եւ թեքվանդոն: Ձյուդոյի ֆեդերացիայի հավաստմամբ՝ իրենց երկու մարզիկներն էլ հաշվարկային մրցումներում բավականին միավորներ են վաստակել եւ արդեն գործնականում ապահովել մասնակցությունն օլիմպիական խաղերին: Բայց քանի որ այդ մրցումները դեռ շարունակվում են, պետք է սպասել դրանց ավարտին եւ միջազգային ֆեդերացիայի կազմելիք պաշտոնական ցուցակներում նրանց անունների հաստատմանը:

Սակայն եղածը դեռ վերջնական սահմանը չէ, եւ մենք դեռ 8-10 նոր ուղեգրերի ակնկալիքներ ունենք: Ասվածն առաջին հերթին վերաբերում է երկու ոճերի ըմբշամարտի ներկայացուցիչներին: Նրանք առջեւում դեռ երեք վարկանիշային մրցաշար ունեն, ինչպես նաեւ բռնցքամարտիկներին, որոնց ուղեգրերի քանակն ավելացնելու համար մնացել է ընդամենը մեկ հնարավորություն: Չի բացառվում նաեւ, որ Միջազգային օլիմպիական կոմիտեն, այսպես կոչված, սպիտակ քարտ հատկացնի այլ մարզաձեւերի ներկայացուցիչ մեր մի քանի մարզիկների եւս: Այնպես որ, առնվազն 22-25 մարզիկներով Լոնդոն մեկնելու մտադրությունը մնում է ուժի մեջ:

## Միշել Պլատինին՝ շների եւ կատուների թշնամի



Կենդանիների պաշտպանության միջազգային կազմակերպությունը ՈՒԵՖԱ-ին եւ անձամբ այդ ֆուտբոլային կազմակերպության նախագահ Միշել Պլատինիին մեղադրում է Եվրոպայի առաջնության անցկացման պատճառով Ուկրաինայում թափառող շների եւ կատուների զանգվածային ոչնչացման մեջ:

Կենդանիների պաշտպանների համոզմամբ՝ ՈՒԵՖԱ-ն եւ անձամբ նախագահը Կիեւի վրա ճնշում են գործադրում, որպեսզի մինչեւ ֆուտբոլային փառատոնի մեկնարկը քաղաքների փողոցները «մաքրված» լինեն: Նրանց տվյալներով, միայն 2011 թվականին միջնադարյան դաժան մեթոդներով (պարզագույն վառարաններում այրելով, դանդաղ ու տանջալի մահ բերող դեղերով եւ այլն) ոչնչացվել է 20 հազար թափառող շուն ու կատու: Իսկ ամենասարսափելին այն է, որ հաճախ, մասնավորապես՝ Դոնեցկում, կենդանիներին թմրանյութեր են տալիս եւ հետո դեռ կենդանի գցելով հատուկ փորված

## Ֆրանսիական պիեսը տեղայնացվեց հայ իրականության մեջ

Ռեժիսոր Սերժ Մելիք-Հովսեփյանի «Մայր» ներկայացման պրեմիերան, ըստ Ֆլորիան Զելերի համանուն պիեսի, կայացել էր անցյալ տարվա դեկտեմբերին: Օրերս այն կրկին «Գոյ» թատրոնում ներկայացվեց հանդիսատեսին՝ «Ագորա» թատերախմբի մատուցմամբ: «Առավոտի» հետ զրույցում Սերժ Մելիք-Հովսեփյանը նշեց, որ ներկայացման առանցքում կին եւ մայր հակասությունն է, որի արդյունքում, նրա ձեւակերպմամբ, շատ կանայք, մայր դառնալով, դադարում են կին լինել. «Շատերը իրենց կարող են գտնել այս պիեսում՝ դավաճանող ամուսին, տանից հեռացած որդի, միայնակ մնացած մայր»: Ռեժիսորի հավաստմամբ՝ թատերախումբն աշխատել է ապահովել այնպիսի հանդիսատես, որը թատրոն գալով՝ պետք է մտածի ոչ միայն զվարճանալու, այլեւ ուրիշների խնդիրների մասին: Գլխավոր հերոսուհու կերպարը մարմնավորած դերասանուհու՝ Նարինե Գրիգորյանի խոսքով՝ մոր կերպարը հակասական է. չես կարող միանշանակ ասել՝ մայրը լավն էր, թե՝ ոչ. «Սկզբում նրա արարքներից հանդիսատեսը կարող է շոկ ապրել, բայց հետագայում զգում ես, որ պարտավոր ես հասկանալ մայրերին»: Չնայած պիեսը ներկայացնում է ֆրանսիացի ամուսինների բարդ հարաբերությունները, Նարինեի կարծիքով՝ նրա սյուժեն խորթ չէ հայ իրականությանը. ախր հայ կանայք էլ հաճախ մոռանում են իրենց մասին ու ամբողջովին տրվում երեխաներին:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ



# Երիտասարդների համար դժվար է

## Զրույց երիտասարդ կոմպոզիտոր եւ դաշնակահար Արփինե Կալինինայի հետ

Արփինե Կալինինան 2007թ. հիմնել է հայ դասական երաժշտության «Կանթեղ» անսամբլը: 2009թ. որպես կոմպոզիտոր արժանացել է ՌԴ «Տրիումֆ» մրցանակին եւ ոսկե մեդալին: Տարիների ընթացքում այս մրցանակին արժանացել են մեծանուն արվեստագետներ Մ. Պլիսեցկայան, Ս. Ռիխտերը, Վ. Գերգիեւը, Ա. Ֆրեյնդլիխը, Եվ. Կիսինը եւ այլք:

- Ներկայացրեք «Կանթեղ» անսամբլի գործունեությունը՝ անդրադառնալով անսամբլի կողմից արդեն երրորդ տարին իրականացվող Կոմիտասյան համերգաշարին, որի բոլոր համերգների մուտքն ազատ է, իսկ «Կանթեղի» մենակատարները նվագում են անվարձահատույց:

- «Կանթեղ» անսամբլը նպատակ ունի լայն հանրությանը, հատկապես երիտասարդներին հասու դարձնել հայ դասական երաժշտությանը՝ ակունքներից մինչեւ մեր օրեր: 2010-ից ցայսօր «Կանթեղը» նախաձեռնել եւ հիմնականում սեփական միջոցներով իրագործում է Կոմիտասյան համերգաշար՝ հայ եւ օտարազգի ունկնդրին ներկայացնելով մեծն Կոմիտասի ստեղծագործությունները մշակութային օջախներում եւ ուսումնական հաստատություններում:

Համերգաշարի ընթացքում անսամբլի մենակատարները ներկայացնում են Կոմիտասի երկերի 1-ին հատորում ամփոփված մեներգերը ձայնի եւ դաշնամուրի, դրանց փոխադրությունները ջութակի եւ դաշնամուրի, սաքսոֆոնի եւ դաշնամուրի համար: Մինչ այժմ տեղի է ունեցել 11 համերգդասախոսություն. համերգային հատվածներն ընդմիջվում են Կոմիտասի մեներգերի մասին գրված իմ երաժշտագիտական աշխատանքից քաղված մատչելի հատվածներով եւ մեներգերի բանաստեղծական տեքստերով: Այսպիսով մենք փորձում ենք հնարավորինս համակողմանի ներկայացնել Կոմիտասի ժառանգությունը:

- Որպես երիտասարդ կոմպոզիտոր՝ ի՞նչ կասեք արդի հայ կոմպոզիտորական դաշտի եւ երիտասարդ կոմպոզիտորների խնդիրների մասին:

- Հայաստանում դասական ժանրում ստեղծագործող ժամանակակից կոմպոզիտորը քիչ հնարավորություններ ունի լսելու եւ ունկնդրի դատին հանձնելու իր ստեղծագործությունները, առավել եւս՝ եթե դրանք խոշոր կտավի երկեր են: Երբ երաժշտությունը չի հնչում, ոչ ոք չի կարող կռահել՝ այն արժեքավո՞ր է, թե՝ ոչ: Առավել ծանր վիճակում են գտնվում երիտասարդ կոմպոզիտորները: Ակնհայտ է՝ եթե երիտասարդ ստեղծագործողը չի լսում իր երկերը, ապա անկարող է զարգանալ, ձեւավորվել որպես պրոֆեսիոնալ կոմպոզիտոր: Նկարիչը, գրողը կարող է տեսնել իր ստեղծագործության արդյունքը կտավի, թղթի վրա, ուրենն եւ՝ կատարելագործվել, մինչդեռ կոմպոզիտորական արվեստի գաղտնիքներին տիրապետելու, անհրաժեշտ պրոֆեսիոնալիզմ ձեռք բերելու համար երիտասարդ կոմպոզիտորը պետք է լսի իր ստեղծագործությունների կատարումները՝ պարզելու ստեղծագործության պարտիտուրի եւ կատարման համապատասխանությունը: Քանի որ երիտասարդ կոմպոզիտորը չունի մեծ լսողական փորձ, ապա պարտիտուրը (կոմպոզիտորի մտահղացման եւ ցանկալի հնչողության գրառումը) կարող է եւ չհամընկնել ռեալ հնչողության հետ: Լսողական փորձը երիտասարդ կոմպոզիտորին օդի եւ ջրի պես անհրաժեշտ է: Երեւանի պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում ամեն տարի ուսանում է 4-6 ուսանող, եւ նրանցից ոչ մեկը հնարավորություն չի ստանում լսել անգամ իր ավարտական դիպլոմային ստեղծագործությունը: Ակնհայտ է, որ կոմպոզիցիայի ուսումնական պրոցեսի անքակտելի մասը պետք է լինի ստեղծագործությունների կատարումը: Աշխարհի՝ մասնավորապես եվրոպական երկրների երաժշտական բուհերում բոլոր ուսանող կոմպոզիտորները հատուկ դասերի ընթացքում աշխատում են տարբեր գործիքներ նվագող կատարողների հետ՝ իրենց ստացած տեսական գիտելիքները համադրելով լուրջ գործնական գիտելիքների հետ, բացի այդ, ուսանողական տարիներին գրված նրանց բոլոր ստեղծագործությունները հնչում են: Այդ է պատճառը, որ հայաստանցի երիտասարդ կոմպոզիտորների մի մասը ձգտում է կրթություն ստանալ արտասահմանում:



- Հավանաբար այդ նպատակով էլ ընդունվել եք Լոնդոնի թագավորական երաժշտական ակադեմիա՝ կոմպոզիցիայի բաժին: Ենթադրում ենք, որ հետագա մասնագիտական կատարելագործումն աշխարհի ամենահեղինակավոր արվեստի բուհերից մեկում նոր հորիզոններ կբացի ձեր ստեղծագործական կյանքում, եւ դուք, որպես պրոֆեսիոնալ երաժիշտ եւ հայ մշակույթի նվիրյալ, ձեր մասնագիտական գիտելիքները նոր թափով ի սպաս կդնեք հայրենի մշակույթի զարգացմանը՝ հայ դասական երաժշտությունն ըստ արժանվույն ներկայացնելով նաեւ միջազգային երաժշտական ասպարեզում:

- Մեծ հաջողությամբ Լոնդոնում հանձնելով ընդունելությանս քննությունները (ներկայացրել եմ ստեղծագործություններիս պարտիտուրները, ձայնագրությունները, երկու երաժշտագիտական աշխատանք, հանձնել եմ երաժշտական բանավոր քննություններ եւ այլն)՝ 2011թ. ընդունվեցի Լոնդոնի թագավորական երաժշտական ակադեմիա՝ ստանալով սակավաթիվ տեղերից մեկը՝ որպես կոմպոզիտոր: Սակայն ինձ չհաջողվեց մեկնել ուսանելու՝ ամբողջական կրթաթոշակ չգտնելու պատճառով: Նշեմ, որ Լոնդոնի թագավորական երաժշտական ակադեմիան չունի անվճար տեղեր եւ կրթաթոշակ չի տրամադրում արտասահմանցի ուսանողներին: Քննություններս հանձնելու եւ կրթաթոշակ գտնելու համար ես, իրոք, մեծագույն ջանքեր գործադրեցի: Այնքան մեծ էր կատարելագործվելու եւ ստեղծագործություններս ուսումնական պրոցեսի ընթացքում լսելու ցանկությունս, որ ես 2011-ին կրկին հանձնեցի ընդունելության քննությունները եւ երկրորդ անգամ ընդունվեցի Թագավորական երաժշտական ակադեմիա: Ուսումս սկսվում է այս տարվա սեպտեմբերին: Ուսմանս վարձը կազմում է 19 800 դոլար, այդ իսկ պատճառով ես դիմել եմ կազմակերպությունների եւ հիմնադրամների, արդեն Հայ բարեգործական ընդհանուր միությունից ստացել եմ 3000 դոլար: Փնտրում եմ աջակիցներ:

Զրուցեց ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ